


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ Է 'ՖՐԱՆԿՈՑՈՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ' ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

07.11.2014 10:39



ՀՀ փաստաբանների պալատը այս տարվա հուլիս ամսին առաջարկ է ստացել անդամակցել «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությանը, որին համաձայնել է և անդամակցության հայտ է ներկայացրել: 2014թ. հոկտեմբերի 18-ի Միության ընդհանուր ժողովում քննարկվել և հաստատվել է Հայաստանի փաստաբանների պալատի անդամակցության մասին օրակարգային հարցը: «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը ստեղծվել է 1985թ Փարիզում, որին այսօր անդամակցում են աշխարհի շուրջ 40 երկրների փաստաբանական միություններ: Այս կազմակերպության կանոնադրական նպատակներն են ապահովել անդամ փաստաբանական միությունների միջև համագործակցությունը՝ հարգելով միմյանց անկախությունը, պաշտպանել անդամ միությունների անկախությունը, զարգացնել պաշտպանության իրավունքը և ապահովել արդար դատաքննության կանոնները, նպաստել անդամ երկրների փաստաբանական համայնքներում փաստաբանի վարքագծի կանոնների պահպանմանը: Նշենք, որ «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը միավորում է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրների փաստաբանական միությունները: Հայաստանը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ասոցացված անդամ է դարձել 2008թ-ից:


Առաջարկվող նորություններ



25.10.2013 ԻՌԻՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ




06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ



07.11.2013 ԱՐԱ ԶՈՂԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ



11.11.2013 ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ
ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ

ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```